Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

=287=

Հ. Խ. Ս. Հ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Խ. Ս. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ՏԵՐԵՎԱՆ 1926

Հ. Ս. Հ.

ՄԱՍՖԱՄՈՐՍՄՈՎ

ԱՂԱՄԱՐԱՀԱՅՈՎ ՄԱՍՅԱՑՅԱՆ

ՄԱՍՖԱՄՈՒՍԱՅԱՍՏԱՆ
Հ. Ս. Հ. ԿԵՆՏՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ 1956

17+25
ԱՊՀ
862

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

Հաստատված և ՀՍԽՀ Կենտգործկոմի կողմից 1925 թ. փետր. 22-ին

ԳԼՈՒԽ I.

1. Բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորների քաղաքային խորհուրդներ կազմվում են բոլոր քաղաքներում:

Ծանոթություն.—Սակավաթիվ բնակչություն ունեցող քաղաքներում քաղաքային խորհուրդների փոխարեն՝ գյուղական խորհուրդների կանոնադրության հիման վրա, կազմվում են գյուղական խորհուրդներ, համապատասխան գավառական գործադիր կոմիտեների վորոշումներով, վոր պիտի հաստատի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը:

2. Քաղաքային խորհուրդներն իրենց իրավասության սահմաններում իշխանության բարձրագույն մարմիններն են համապատասխան քաղաքում և մխացնում են աշխատավոր ամբողջ բնակչությունը տեղական և պետական կառավարչության ու շինարարության մասնակցելու համար:

3. ՀՍԽՀ Սահմանադրության համաձայն քաղաքային խորհուրդները [illegible] են.

ՀՍԽՀ ԱՐԽԻՎ
ՄԵՏԱՂԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Խ. Հ.
Ս. Զ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍոցիալիստԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Հ. Ս. Խ. Հ.

ա) քաղաքի կուլտուր-տնտեսական վիճակը բարձրացնելու և բնակչության կյանքն ու կենցաղը բարվոքելու համար միջոցներ ձեռք առնելը.

բ) ավյալ քաղաքի համար տեղական նշանակություն ունեցող բոլոր խնդիրների լուծումը.

գ) խորհրդային իշխանության համապատասխան բարձր մարմիններից վորոշումների կենսագործումը.

դ) քաղաքային խորհրդի յենթակա բոլոր հիմնարկությունների գործունեության միավորումն ու ղեկավարությունը.

ե) հեղափոխական իրավակարգի և հասարակական անդորրության ապահովությունն ու պահպանությունը քաղաքի սահմաններում.

զ) համապետական նշանակություն ունեցող խնդիրների քննությունը թե՛ իրենց նախաձեռնությամբ և թե՛ վերադաս գործադիր կոմիտեների առաջարկությամբ.

ը) քաղաքային բյուջեի կազմելը, քննելը, հաստատելն ու կատարելը, այլև բյուջեյի կատարման հաշվետվությունը հաստատելը.

Ծանոթություն.—Համապատասխան գավառական գործադիր կոմիտեներին իրավունք և վերապահվում քննելու քաղաքային խորհուրդների բյուջեները թե՛ գործող որենքներին համաձայն լինելու տեսակետից և թե՛ ըստ էության, այլև քննելու նրանց կատարման հաշվետվությունը:

4. Քաղաքային խորհուրդներն իրավական անձի իրավունքներ են վայելում:

5. Քաղաքային խորհուրդների ընտրելու և ընտրվելու իրավունք են վայելում այն բոլոր քաղաքացիները, վորոնք ընտրական իրավունքներ ունեն ՀԹՍՀ Սահմանադրության համաձայն:

6. Քաղաքային խորհուրդն ընտրվում է մի տարով:

Ծանոթություն.—Ամբողջ խորհրդի վաղաժամ ընտրությունը կատարվում է վերադաս գործադիր կոմիտեների և խորհուրդների վերադաս համագումարների առաջարկությամբ կամ խորհրդի բոլոր անդամների առնվազն մի յերրորդի դուրս գալու դեպքում:

7. Քաղաքային խորհուրդներն ընտրվում են հետևյալ նորմաներով. 1000 հոգի բնակչություն ունեցող քաղաքներում՝ 15 ընտրողին մի պատգամավոր. 3000-ից մինչև 5000 բնակիչ ունեցող քաղաքներում՝ 30 ընտրողին մի պատգամավոր. 5000-ից մինչև 10,000 բնակիչ ունեցող քաղաքներում՝ 50 ընտրողին մի պատգամավոր, 10,000-ից մինչև 15,000 բնակիչ ունեցող քաղաքներում՝ 60 ընտրողին մի պատգամավոր. 15,000-ից մինչև 20,000 բնակիչ ունեցող քաղաքներում՝ 70 ընտրողին մի պատգամավոր. 20 հազարից մինչև 25,000 բնակիչ ունեցող քաղաքներում՝ 75 ընտրողին մի պատգամավոր. 25,000-ից մինչև 50,000 և ավելի բնակիչ ունեցող քաղաքներում՝ 100 ընտրողին մի պատգամավոր:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՄԱՐ
862 - ԱԳԴ

Մանրություն 1.—Եթե ընտրական ժողովում ընտրողների լրիվ նորմաներից ավելի վորոշ թվով ընտրողներ լինեն, վոր սույն հոդվածով նախատեսված ընտրական նորմայից պակաս են, այդ ընտրողներն իրավունք ունեն լրացուցիչ պատգամավոր ընտրելու, եթե նրանց թիվը համապատասխան ընտրական նորմայի կիսից պակաս չի:

Մանրություն 2.—Քաղաքային խորհրդի անդամների ընտրության հետ միաժամանակ ընտրվում են փոխանդամներ ամբողջ կազմի 1/3-ի թվով:

Մանրություն 3.—Ընտրական նորմաները առանձին քաղաքների համար կարող են փոփոխվել միայն Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության հաստատությամբ:

8. Խորհուրդների ընտրությունները կատարվում են Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ նրա նախագահության՝ «Խորհուրդների և խորհուրդների համագումարի ընտրության» վերաբերյալ հրահանգի համաձայն:

9. Քաղաքային խորհուրդը չի կարող խորհրդի առանձին անդամներին լիազորություններից զրկել, բացի սույն կանոնադրության 10 հոդ. «զ» կետով նախատեսված դեպքերից:

Անհրաժեշտ դեպքերում (նիստեր չհաճախելը, հանձնարարություններ չկատարելը, խորհրդի անդամին անվայել վարքը և այլն) քաղաքային խորհուրդը դիմում է ավելի անդամի ընտրողներին, վոր հետ կանչեն նրան:

Մանրություն 1.—Խորհրդի կազմից դուրս եկող առանձին անդամներին փոխարինում են համապատասխան ընտրական ժողովում ընտրված փոխանդամները՝ ձայների մեծամասնության կամ փոխանդամների ցանկի կարգով. փոխանդամներ չլինելու դեպքում համապատասխան ընտրական ժողովում փոխանդամի մասնակի վերընտրություն է նշանակվում:

Մանրություն 2.—Ընտրողների վճիռը անդամին հետ կանչելու մասին վերջնական է և անբողոքելի:

10. Քաղաքային խորհրդի առանձին անդամները դուրս են գալիս նրա կազմից.

ա) եթե անդամին հետ կանչելու մասին վորոշումն է անում նրան ընտրող ընտրական ժողովը. այդպիսի ժողովին պիտի մասնակցեն այդ ժողովի ընտրողների առնվազն 75 տոկոսը, իսկ վորոշումը կայացվում է մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ.

բ) իրենց ցանկությամբ, վոր պիտի հայտնեն իրենց ընտրողներին կամ խորհրդի նախագահությանը.

գ) ընտրական իրավունքները կորցնելու հետևանքով՝ ՀՍՍՀ Սահմանադրության համաձայն:

11. Այն քաղաքներում, վորտեղ սույն կանոնադրության 1 հոդվածի համաձայն կազմվում են դյուղական խորհուրդներ, վերջինները խորհուրդների դավառական համագումարի պատգամավորներ են ընտրվում:

12. Սույն կանոնադրության հիման վրա կազմվող քաղաքային խորհուրդները պատգամավորներ են ուղարկում խորհուրդների գավառական համագումարներին՝ 200 ընտրողին մի պատգամավորի հաշվով: Այս նորմայից բացառություններ սահմանում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը՝ համապատասխան գավգործկոմների առաջարկությամբ:

Ծանոթություն.—Քաղաքային խորհուրդը Գործադիր Կոմիտեի վարչությանը համաձայն չլինելու դեպքում իրավունք ունի խնդիրը փոխանցելու վերադաս գործադիր կոմիտեին, առանց կասեցնելու Գործադիր Կոմիտեի վճիռը:

ԳԼՈՒԽ II.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

14. Քաղաքային խորհրդի աշխատանքը կատարելու և քաղաքային տնտեսությունը կառավարելու համար քաղաքային խորհուրդն իր կազմից ընտրում է նախագահ և նախագահություն՝ վոչ ավելի քան 11 հոգուց բաղկացած:

15. Քաղաքային խորհուրդների նախագահությունները՝ պլենար նիստերի միջանկյալ ժամանակամիջոցում իշխանության բարձրագույն մարմիններն են քաղաքի սահմաններում և բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների քաղաքային խորհուրդների անունից իրագործում են բոլոր նախագծված աշխատանքները գործող օրենքների սահմաններում:

16. Քաղաքային տնտեսությունն անմիջականորեն վարելու համար քաղաքային խորհուրդները կազմում են կոմունալ բաժիններ, վորոնք ունեն իրենց հատուկ գործավարությունը, հաշվառությունը և հաշվետվությունը: Բաժինների համար կազմվում է առանձին տնտեսական ծրագիր և առանձին նախահաշիվ, վոր մտնում է առանձին քաղաքային բյուջեյի մեջ, վորպես նրա մի մասը:

Քաղաքային խորհրդի աշխատանքների տեխնիկական կատարողներն են համապատասխան գործադիր կոմիտեների բաժինները, վորոնց մեջ կազմվում են այդ նպատակով առանձին մասեր:

Քաղաքային աշխատանքը վարելու համար կազմված մասերի վարիչներին նշանակում է քաղաքային խորհուրդը համապատասխան գործադիր կոմիտեի համաձայնությամբ:

Ծանոթություն.—Քաղաքային խորհրդի վորոշմամբ՝ ինքնուրույն կոմունալ բաժիններ կարող են չկազմվել, և այդպիսի դեպքերում քաղաքային տնտեսությունը վարելը հանձնվում է համապատասխան գործադիր կոմիտեների բաժիններին:

17. Քաղաքային խորհրդի նախագահությունն իր գործունեության համար հաշիվ է տալիս քաղաքային խորհրդի պլենար նիստին առնվազն մի անգամ յուրաքանչյուր կիսամյակում:

ԳԼՈՒԽ III.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

18· Քաղաքային խորհուրդները իրենց ամբողջ գործունեության ընթացքում մշտական կապ պիտի պահպանեն բնակչության հետ, ընտրողների ժողովներին ներկայացնելով զեկույցներ խորհրդի և խորհրդային բարձրագույն մարմինների գործունեության մասին և գրավելով նրանց մասնակցություն խորհրդի վճռելիք խնդիրների մշակության ու խորհրդի գործնական աշխատանքին՝ սեկցիաների և հանձնաժողովների միջոցով։

19· Քաղաքային խորհուրդների անելիքներն ընդհանուր կառավարչության, քաղաքի սահմաններում հեղափոխական օրինականություն ապահովելու և պետական իրավակարգն ու հասարակական անդորրությունը պահպանելու գործում իրականացնելու համար քաղաքային խորհուրդները՝

ա) հրատարակում են պարտադիր վորոշումներ գործող օրենքների հիման վրա·

բ) կազմում են ընտրական հանձնաժողովներ խորհուրդների վերընտրության համար, վորոշում են ընտրություններ կատարելու կարգը և քաղաքի ընտրական շրջանները·

գ) իրավունք ունեն մերժելու շրջանային ընտրական հանձնաժողովների առանձին անդամներին և հարկ լեղած դեպքում՝ լուծելու այդ հանձնաժողովները·

դ) քննում են օրենքով սահմանված դեպքերում առանձին ընտրական ժողովների կատարած ընտրությունները·

ե) պայմանագրերով տալիս են հավատացյալների կազմակերպություններին ոգտագործելու պաշտամունքի շենքերն ու այլ գույքը, ընդհանուր հսկողություն ունեն այդ պայմանագրի կատարման և քաղաքի մաշտաբով գործող կրոնական կազմակերպությունների գործունեության վրա·

զ) հետևում են, վոր կիրառվի յեկեղեցին պետությունից անջատելու փերբերյալ դեկրետը·

ը) միջոցներ են ձեռք առնում կանխելու տարերային աղետները (հեղեղներ, հրդեհներ և այլն)· կազմակերպում են պայքար նրանց դեմ և ոգնություն ցուցադրում տուժածներին·

թ) ընդունում են, ընթացք են տալիս և պատշաճ դեպքերում քննում են խորհրդային ապարատի բոլոր մարմինների և աշխատակիցների գործողությունների դեմ ուղված գանգատները·

ժ) վարում են հանցագործության դեմ մաքառելու գործը·

ի) վարում են քաղաքացիական վիճակի ակտերի տոմարագրության գործը·

լ) վարում են տրխիվի նյութերի հաշվառության ու պահպանության գործը։

20. Դատարանակազմության և դատավարության տեսակետից՝

ա) քաղաքային խորհուրդները ընտրում և հետ են կանչում քաղաքային շրջանների ժողովրդական դատավորներին և քննիչներին.

բ) բոլոր քաղաքային խորհուրդները միջոցներ են ձեռք առնում աշխատավոր բնակչության իրավաբանական ողնություն ցույց տալու համար:

21. Ֆինանսների և հարկերի վերաբերմամբ քաղաքային խորհուրդները՝

ա) կազմում, քննում, հաստատում և գործադրում են քաղաքային բյուջեները.

բ) հսկում են կենտրոնական իշխանության սահմանած պետական հարկերի և տուրքերի բաշխման կանոնադրության վրա՝ քաղաքի սահմաններում և միջոցներ են ձեռք առնում նրանց գանձման համար՝ ի հաստատ պետության.

գ) սահմանում և գանձում են քաղաքային հարկերն ու տուրքերը՝ գործող օրենքներով հաստատված կարգով և նրանց սահմաններում.

դ) սահմանում են քաղաքային կարիքների համար համապատասխան հարկերի վերադիր հավելումները՝ օրենքով վերջված սահմաններում.

ե) միջնորդություններ են հարուցանում նոր հարկեր ու տուրքեր սահմանելու կամ պետական հարկերից ու այլ հաստատություններից համապատասխան մասնատություններ անելու մասին.

զ) կազմակերպում են վարկային և փոխառու հիմնարկություններ.

ը) հրատարակում են քաղաքային բյուջեն կազմելու, կատարելու և նրա հաշվետվության կարգը սահմանող կանոններ ու հրահանգներ.

թ) օրենքով սահմանված կարգով իրավունք ունեն փոխառություններ կնքելու պետական, կոոպերատիվ և մասնավոր հիմնարկություններում, այլ և առանձին անձերից, թե՛ ԽՍՀ Միության մեջ և թե՛ արտասահմանում, մուրհակներով և այլ հանձնառություններով, յերկարատև ու կարճատև, այլ և պարտատոմսեր բաց թողնելով.

ժ) լսում և հաշվետու զեկուցումներ և իրավունք և վայելում քաղաքային ավյալ քաղաքի սահմաններում գտնվող այն հիմնարկությունների ու ձեռնարկությունների նախահաշիվների ու արտադրական ծրագրերի դեմ, վորանք յենթակա չեն քաղաքային խորհրդին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այս իրավունքը չի կատեգորում նախահաշիվ սահմանված կարգով ընդունվելը:

22. Քաղաքային խորհրդի նախագահությունն իրավունք ունի տեղական բյուջեյի վարկերը տեղափոխելու քաղաքային նախահաշվի մի հոդվածից մյուսը միևնույն պրակի սահմաններում, առառավելն ամբողջ ավյալ հոդվածի 25 տոկոսի չափով: Հաստատված բյուջեյի մեջ ավելի մեծ փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության դեպքում լրացուցիչ նախահաշիվ և կազմվում, վոր հաստատում և քաղաքային խորհուրդը սահմանված կարգով:

23. Տնտեսության և արդյունաբերության ասպարիզում քաղաքային խորհուրդները՝

ա) շահագործում են իրենց յենթակա ձեռնարկություններն անմիջականորեն, հաստատելով նրանց արտադրական ծրագրները, նախահաշիվները, հաշվետվությունը և այլն, կամ վարձու տալով, հետևելով, որ վարձակալները կատարեն պայմանագրերի բոլոր պայմանները, նաև որենքով սահմանված այլ յեղանակներով.

բ) կազմակերպում են թե՛ արտադրական և թե՛ առևտրական բնույթ ունեցող նոր ձեռնարկություններ.

գ) կառավարում են բարձրագույն մարմինների յենթակա ձեռնարկությունները՝ նրանց լիազորությամբ.

դ) վերահսկում են այն ձեռնարկությունների ու հիմնարկությունների վրա, որ յենթակա չեն քաղաքային խորհրդին, առանց նրանց գործունեությունը միջամտելու, և հնարավոր չափով աջակցում են նրանց.

ե) նպաստում են քաղաքի արդյունաբերության և առևտրի զարգացմանը և կարգավորում են գործող որենքների սահմաններում.

զ) ամեն կերպ նպաստում և աջակցություն են ցույց տալիս կոոպերացիայի բոլոր տեսակներին:

24. Կոմունալ տնտեսության ասպարիզում՝ բացի սույն կանոնադրության 21 և 23 հոդվածներում մատնանշված ֆունկցիաներից, քաղաքային խորհուրդները.

ա) միջոցներ են ձեռք առնում քաղաքի բարեկարգությունը բարվոքելու.

բ) կազմակերպում և վարում են քաղաքի թե՛ ապրանքատար և թե՛ մարդատար փոխադրական միջոցները.

գ) վարում են հրդեհաշիջության և հրդեհները կանխելու միջոցների կազմակերպման գործը.

դ) վարում են էլեկտրական կայարանները, ջրմուղը, կոյուղիները և այլ հանրօգուտ ձեռնարկությունները.

ե) միջոցներ են ձեռք առնում զարգացնելու կոմունալ շինարարությունը, ժամանակորոշես բնակարանաշինը և կարգավորում են բնակարանային գործը, գործող որենքների սահմաններում տնօրինելով բնակելի տարածությունը.

զ) կազմակերպում են կոմունալ վարկ՝ ինքնուրույն բանկեր հիմնելով և ուրիշ բանկերի մասնակցելով:

25. Հողային—կոմունալ տնտեսության ասպարիզում քաղաքային խորհուրդները՝

ա) վարում են քաղաքային հողերի և այլ կալվածների շահագործման ու վարձակալության գործը.

բ) վերցնում են քաղաքային հողերի ռենտայի կապարները՝ գործող որենքների համաձայն և իրագործում նրա գանձման վերաբերյալ կարգադրությունները.

գ) կատարում են քաղաքի սահմանագիծը ձևակերպելու, մելիորատիվ, հատակագծման աշխատանքները և հողամասեր են հատկացնում գյուղատնտեսական չահագործման և շինարարական նպատակների համար.

դ) միջոցներ են ձեռք առնում քաղաքային հողերի սահմաններում աղտոտողների, խոտհարքի և անտառային անտեսություն ստեղծելու և պարպելու.

ե) նպաստում են անասնապահության, այգեգործության և գյուղատնտեսության այլ ճյուղերի զարգացմանը քաղաքի սահմաններում.

զ) կազմակերպում են անասնաբուժական ոգնություն.

26. Աշխատանքի կազմակերպման և պաշտպանության ապարիզում քաղաքային խորհուրդները՝

ա) հետևում են, որ պետական, հասարակական և մասնավոր ձեռնարկությունները կատարեն աշխատանքի պաշտպանության և վարձատրության վերաբերյալ օրենքներն ու կանոնները, հավաքական և աշխատավարձերի պայմանագրերը և այլն.

բ) գործող օրենքների սահմաններում կազմակերպում են աշխատանքի շուկան և միջոցներ են ձեռք առնում գործազրկության դեմ մաքառելու համար, աշխատանքի մարմինների համաձայնությամբ բանալով աշխատանքի բորսաներ կամ տեղեկատու կայաններ, կազմակերպելով հանրային աշխատանքներ, հանրային սննդատվություն և այլն:

գ) իրագործում են հիմնարկությունների ու ձեռնարկությունների աշխատանքի պայմանները բարվոքող սանիտարա-տեխնիկական միջոցները.

դ) հսկում են սոցիալական ապահովագրության վերաբերյալ օրենքների գործադրության և համապատասխան կանոնների կատարման վրա:

27. Ժողովրդական առողջապահության ապարիզում քաղաքային խորհուրդները՝

ա) կազմակերպում և վարում են քաղաքի բնակչության բժշկական ոգնության և սխտարգելության գործը.

բ) պայքարում են վարակիչ, սոցիալական և պրոֆեսիոնալ հիվանդությունների դեմ և միջոցներ ձեռք առնում նրանց տարածվելը կանխելու:

գ) ամեն կերպ աջակցում են բարձրագույն մարմինների բոլոր բժշկական նախաձեռնություններին, մասնավորապես նրանց այն բժշկական և սանիտարական-սխտարգել հիմնարկություններին, որոնք գտնվում են քաղաքի սահմաններում.

դ) կազմակերպում են քաղաքում սանիտարական հսկողություն.

ե) միջոցներ են ձեռք առնում ապահովելու քաղաքի առողջապահական պրոֆիլակտիկան՝ սանիտարական և սխտարգել ձեռնարկություններ կազմակերպելով.

զ) աջակցում են բնակչության ֆիզիկական զարգացմանը.

ը) աջակցում են մայրության և մանկության պաշտպանության գործի զարգացմանը.

թ) կազմակերպում և վարում են մանկական պարտեզներ, մասնաճյուղեր, հրապարակներ և այլն:

28. Սոցիալական ապահովության առպարիզում քաղաքային խորհուրդները՝

ա) ոգնում են կարիքի գինվորների, ռազմաճակատներում կամ իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ սպանվածների կարոտյալ ընտանիքներին, մանավանդ աշխատունակ անդամներ և տնտեսություններից կամ արհեստներից հասույթ չունեցողներին.

բ) աջակցում են ինվալիդների կոոպերացիայի կազմակերպման.

գ) ոգնում են պատերազմի և աշխատանքի ինվալիդներին ու նրանց ընտանիքներին, այրի զառամյալներին ու անաշխատունակներին.

դ) կազմակերպում և պահում են անկեյանոցներ:

29. Կուլտուր—կրթական առպարիզում քաղաքային խորհուրդները՝

ա) ամեն միջոց ձեռք են առնում բարձրացնելու քաղաքի բնակչության կուլտուրական և քաղաքական մակարդակը՝ բանալով և պահելով հանրակրթական և մասնագիտական դպրոցներ ու դասընթացներ, ակումբներ, գրադարաններ, թանգարաններ, թատրոններ և այլ քաղաքական—կրթական հիմնարկություններ.

բ) ոգնում են անապատատան յերեխաներին, կազմակերպում և պահում են մանկատներ.

գ) միջոցներ են ձեռք առնում պահպանելու հնության և արվեստի հիշատակարանները.

դ) աջակցում են գիտական և կուլտուր—կրթական կազմակերպությունների և հիմնարկությունների զարգացմանը:

30. Զինվորական առպարիզում՝

ա) հատկացնում են զորամասերին բնակարաններ և կոմունալ ապահովություն են ցույց տալիս գործող որենքների սահմաններում.

բ) աջակցում են գինվորական դերատեսչության ձեռնարկած միջոցներին:

31. Ազգային ինդրի վերաբերմամբ քաղաքային խորհուրդները միջոցներ են ձեռք առնում հոդալու ազգային փոքրամասնությունների կարիքները՝ բուն նրանց առանձնահատկություններ:

ԳԼՈՒԽ IV.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

32. Խորհրդի նոր կազմի առաջին պլենումը դումարում է համապատասխան ընտրական հանձնաժողովի վերընտրությունների ծրագրով սահմանված ժամանակին և բաց և անում նախորդ խորհրդի նախագահը:

33. Պլենումի առաջին նիստն ընտրում է խորհրդի նախագահություն, խորհրդի նախագահ, մանդատային հանձնաժողով և լսում է ընտրական հանձնաժողովի հաշվետու զեկուցումը:

Հեռագրում խորհրդի պլենար նիստերը դումարում է խորհրդի նախագահությունը:

34. Խորհրդի հերթական պլենար նիստերը դումարվում են առնվազն ամիսը մի անգամ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Արտակարգ նիստերը դումարվում են խորհրդի նախագահության հայեցողությամբ և խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն մի յերրորդի պահանջմամբ:

35. Խորհրդի պլենար նիստերը դումարվում են ըստ կարելվույն աշխատավոր բնակչության մոտ վայրերում՝ գործարաններում, արհեստակցական միությունների ակումբներում և այլն: Նիստերի տեղը, ժամանակն ու օրակարգը հրապարակվում է ի գիտություն հանրության վաղ պակաս քան յերկու օր առաջ:

36. Խորհրդի նիստում վճռական ձայնի իրավունք են վայելում միայն խորհրդի անդամները:

37. Խորհրդի նիստերին մասնակցելու յեն հրավիրվում նաև խորհրդի բոլոր փոխանդամները, քաղաքային բաժինների վարիչները և մյուս բաժինների քաղաքի վերաբերյալ գործունեությունը դյուրավորող անձինք, այլ և, յեթե փաստորեն հարկավոր լինի, գործարանային և տեղական կոմխոնների ներկայացուցիչներն ու անդամները, արհեստակցական միությունների, Կարմիր բանակի, կանանց պատգամավորական ժողովների և այլ հասարակական կազմակերպությունների և բնակչության ներկայացուցիչները, խորհրդակցական ձայնի իրավունք վերապահելով նրանց:

38. Քաղաքային խորհրդի պլենումը.

ա) Հաստատում է քաղաքային բյուջեն, փոխառությունները և բյուջեյի կատարման հաշվետվությունը.

բ) Քննում է տեղական խորհրդային շինարարության բոլոր խնդիրները.

գ) Վարչում է սեկցիաների թիվը, նրանց տեսչության առարկաները, բաշխում է խորհրդի անդամներին ըստ սեկցիաների.

դ) Ընտրում է խորհուրդների համագումարների պատգամավորներ:

Բացի սրանից՝ պլենումը քննում է.

ե) Տեղական անտեսության ու կառավարության խնդիրների վերաբերյալ զեկուցումներ.

զ) Իր նախագահության հաշվետվությունները.

է) Մանդատային հանձնաժողովի զեկուցումները.

թ) Հաստատում է պատգամավորների լիազորությունները.

ժ) Խորհրդի սեկցիաների զեկուցումները.

ի) Քաղաքային բաժինների վարիչների և այլ բաժինների քաղաքի վերաբերյալ գործունեությունը դյուրավորող անձանց զեկուցումներն ու հաշվետվությունները.

լ) Պլենումի և սեկցիաների աշխատանքների ծրագիրը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սույն հոդվածի ա. գ. դ. և ի. կետերում նախատեսված ֆունկցիաները պատկանում են բացառապես խորհրդի պլենումին, վորը միայն իրավունք ունի այդ ինդիրների վերաբերյալ վորոշումներ կայացնելու:

39. Անկախ 38 հոդվածում հիշատակված ինդիրների քննությունից, քաղաքային խորհուրդները պլենար նիստերում կարող են քննել՝ թե իրենց նախաձեռնությամբ և թե վերադաս գործադիր կոմիտեների առաջարկությամբ, համապետական շինարարության բոլոր ինդիրները, այլև ընդհանուր քաղաքային բնույթ ունեցող ինդիրներ:

40. Գատդամավորներին խորհրդի հերթական պլենար նիստերում քննելի ինդիրների բովանդակությանը ծանոթացնելու նպատակով անհրաժեշտ նյութերը, դրավոր, վաղորոք ուղարկվում են խորհրդի անդամներին կամ հրապարակվում մամուլի մեջ:

41. Պլենար նիստերն որինական են, յեթե ներկա յե անդամների վոչ պակաս, քան կեսը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այս նորման կիրարկվում է վոչ միայն նիստերը բանալու համար, այլ նաև նիստի աշխատանքների ամբողջ ընթացքում:

ԳԼՈՒԽ V.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

42. Խորհրդի բոլոր անդամներին, այլ և աշխատավորների լայն մասսաներին քաղաքային խորհուրդների և նրա մարմինների գործնական աշխատանքներին մասնակից անելու նպատակով քաղաքային խորհուրդները բաժանվում են սեկցիաների՝ տնտեսության և կառավարչության առանձին ճյուղերի համար: Սեկցիաներն աջակցում են քաղ. խորհրդի ամբողջ գործունեությանը, այլև վերահսկում են խորհրդի գործադիր մարմինների գործունեության վրա:

43. Սեկցիաների թիվը և նրանց լուրաքանչյուրի ֆունկցիաները վորոշում է խորհուրդը:

44. Բոլոր քաղաքային խորհուրդների համար պարտադիր են հետևյալ սեկցիաները.

ա) կոմունալ տնտեսության.

բ) ֆինանսական-բյուջետային.

գ) ժողովրդական լուսավորության.

դ) առողջապահության.

ե) կոոպերատիվ-առևտրական:

Այլ սեկցիաներ (վարչական-իրավական, բնակարանային, աշխատանքի պաշտպանության, արդյունաբերության, սոցիալական ապահովության, ֆինվերքական, բանվորա-գյուղացիական տեսչության և այլն) կազմվում են խորհրդի վորոշմամբ՝ քան կարիքի:

45. Խորհրդի անդամները մտնում են այս կամ այն սեկցիան իրենց հաճախ դիմքով, բայց խորհրդի ամեն մի անդամ պարտավոր է աշխատել սեկցիաներից մեկում:

46. Բացի խորհրդի անդամներից ամեն մի սեկցիայի կազմի մեջ վերջինս անդամներ կարող են մտնել արհեստակցական միությունների, դործատանց և տեղական կոմիտեների, աշխատավոր կանանց պատդամավորական ժողովների, Կարմիր բանակի և առանձին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, այլև աշխատավոր անհատներ, վերոնց մասնակցությունը սեկցիայի գործունեության մեջ ցանկալի է համարվում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սեկցիայի կազմի մեջ անպայման մտնում է համապատասխան մարմնի ղեկավարը (բաժնի կամ ենթաբաժնի վարիչը):

47. Խորհուրդը և նրա նախագահությունը կարող են ժամանակավորապես ազատել այս կամ այն անդամին սեկցիաներում աշխատելուց:

48. Սեկցիաներում բոլոր անդամները վճռական ձայնի իրավունք են վայելում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սեկցիայի առանձին նիստերին հրավիրվող անձինք, այն է՝ փորձագետները, գիտակ անձինք և այլն, խորհրդակցական ձայնի իրավունք են վայելում:

49. Սեկցիան՝

ա) քննում և տնտեսության և կառավարչության համապատասխան ճյուղի աշխատանքի ծրագրերը.

բ) լսում և համապատասխան մարմինների հաշվետու զեկուցումները, նրանց մասին յեղրակացություններ և տալիս պլենար նիստին կամ նախագահությանը.

գ) քննում և դործադիր մարմինների ընթացիկ աշխատանքի հիմնական ֆոնդիները և իր յեղրակացություններն և տալիս նրանց մասին:

դ) Ծանոթանում և հիմնարկությունների, ձեռնարկությունների և այլն տնտեսության և կառավարության համապատասխան ճյուղի վերաբերյալ գործունեությանը.

ե) կարդում և սեկցիայի անդամներին՝ աշխատանքների ավյալ ճյուղերում գոյություն ունեցող ձեռնարկությունների և հիմնարկությունների գործունեությանն հակիրճ և ամփոփիչ համար.

զ) լսում և բյուրոյի զեկուցումները սեկցիայի ծրագրի ու վճիռների կատարման մասին.

է) ընտրում և մշտական հանձնաժողովներ (ենթասեկցիաներ) գործադիր ապարատի վերոչ մասերի հետ կառավարության և տնտեսության համապատասխան ճյուղում մերձավոր կապ պահպանելու համար.

ը) ընտրում և ժամանակավոր հանձնաժողովներ առանձին խնդիրներ մշակելու համար.

թ) քննության է առնում աշխատանքի ավյալ ճյուղի վերաբերյալ նախագծերը, կանոնները և այլն, որ ներկայացնում են սեկցիաների առանձին անդամները՝ նախաձեռնության կարգով։

ժ) քննում է զանազան հիմնարկությունների, կազմակերպությունների և անհատների նույնպիսի նախագծերն ու կանոնները աշխատանքի համապատասխան ճյուղի վերաբերմամբ։

ժա) համապատասխան գործադիր մարմինների գործունեության հիմնական խնդիրների վերաբերյալ ծրագրերի և նախագծերի մշակության ժամանակ մասնակցում է նրանց գումարած խորհրդակցություններին, կոնֆերենցիաներին և այլն։

50. Սեկցիայի վորոշումները հաստատում է ի կատար է ածում քաղաքային խորհրդի նախագահությունը։

51. Սեկցիան՝ քաղաքային խորհրդի նախագահության վճռին համաձայն չլինելու դեպքում խնդիրը կարող է ներկայացնել ի քննություն խորհրդի պլենար նիստին։

52. Քաղաքային խորհրդի նախագահությունը նախապես մշակելի խնդիրները հանձնում է համապատասխան սեկցիային։

53. Սեկցիան գումարվում է պլենար նիստի կամ խորհրդի նախագահության և սեկցիայի բյուրոյի սահմանած վորոշ ժամանակներում։

54. Սեկցիան իր լիազորությունների տևողության ժամանակի համար ընտրում է իր միջից բյուրո, վորի մեջ անպայման մտնում է քաղաքի վերաբերյալ աշխատանքների համապատասխան ճյուղի ղեկավարը։

55. Բյուրոն ընտրում է սեկցիայի նախագահ, փոխնախագահ և քարտուղար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սեկցիայի նախագահ չի կարող լինել համապատասխան գործադիր մարմնի ղեկավարը։

56. Բյուրոն սեկցիայի գործադիր և անընդհատ մարմինն է և պատասխանատու է սեկցիայի առաջ։ Բյուրոն նախապատրաստում է խնդիրները՝ սեկցիայի ընդհանուր նիստում լսելու համար, հավաքում և համակարգում է նյութեր, հաշվի է առնում սեկցիայի հանձնաժողովների անդամների, նիստերի յեկողների, կազմում է սեկցիայի գործունեության մասին հաշվետու զեկուցումներ, ընթացք է տալիս սեկցիայի վորոշումներին, հսկում է նրանց կատարման վրա, իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում է քաղաքային խորհրդի նախագահության նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։

57. Սեկցիայի գործունեության ընդհանուր ղեկավարությունը պատկանում է քաղաքային խորհրդի պլենար նիստին և նախագահությանը։

58. Յերկու կամ ավելի սեկցիաների վերաբերյալ ընդհանուր խնդիրների քննության համար քաղաքային խորհրդի նախագահության կարգադրությամբ կարող են գումարվել սեկցիաների բյուրոների կամ ամբողջ սեկցիաների միացյալ նիստեր։

ԳԼՈՒԽ VI.

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

59· Քաղաքային խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են՝

ա) անձամբ մասնակցելով խորհրդի, նրա սեկցիաների և հանձնաժողովների աշխատանքներին·

բ) հասարակական գործունեությամբ թե իրենց հիմնարկության կամ ձեռնարկության և թե այլ ձեռնարկությունների մեջ·

գ) անմիջական և սերտ կապ պահպանելով իրենց ընտրողների հետ:

60· Խորհրդի անդամը պարտավոր է հաճախել թե՛ խորհրդի պլենար նիստերին և թե՛ այն սեկցիաների ու հանձնաժողովների բոլոր նիստերին, որոնց անդամն է ինքը, և կատարել նրանց բոլոր հանձնարարությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Խորհրդի անդամը, յեթե չի կարող նիստին ներկա լինել, կամ իր ստացած հանձնարարությունը կատարել, պարտավոր է վաղօրոք տեղեկացնել այդ մասին մանդատային հանձնաժողովին կամ սեկցիայի և հանձնաժողովի քարտուղարին:

61· Խորհրդի անդամները բացի նիստերին մասնակցելուց և սեկցիայի հանձնարարությունները կատարելուց, իրենց պարտականությունները կատարում են նաև հետևյալ կարգով·

ա) անձամբ ծանոթանում են կառավարչության և անտեսության իրենց աշխատանքին համապատասխան ճյուղերին·

բ) ներկայացնում են իրենց առաջարկությունները՝ հիմնարկությունների և ձեռնարկությունների նկատմամբ թերությունները վերացնելու և նրանց կազմակերպությունն ու գործունեությունը բարվոքելու մասին·

գ) անձամբ, առնվազն յերեք ամիսը մի անգամ, հաշիվ են տալիս ընտրողներին թե՛ իրենց և թե՛ հանձնաժողովի, սեկցիայի, խորհրդի գործունեության մասին և նրանց նկատողություններն ու առաջարկությունները ներկայացնում են ի քննություն խորհրդի·

դ) գործում են վարչական ձեռնարկություններում ու հիմնարկություններում, որպես խորհրդի կողմից նրանց հետ կապված ներկայացուցիչներ, այլև արտադրական միավորումների մեջ չկազմակերպված ընտրողների շրջանում·

ե) հսկում են խորհրդի, նրա սեկցիաների և հանձնաժողովների վարչությունների գործադրության վրա, որոնցում նրանք աշխատում են, և հաղորդում վարչությունների իրագործման ժամանակ յերևան յեկած դժվարությունների մասին:

62· Խորհրդի անդամը մասնակցում է բոլոր կարելությունն այն ձեռնարկությունների ու հիմնարկությունների բանվորների ու ծառայողների և բնակչության չկազմակերպված խմբերի բոլոր ընդհանուր պատգամավորական ժողովներին, որոնց կողմից ինքն ընտրված է կամ որոնց հետ կապված է:

63. Խորհրդի անդամը մասնակցում է այն ձեռնարկության կամ հիմնարկության վարչության կազմակերպած տեղական բնույթ ունեցող արտադրական խորհրդակցություններին ու կոնֆերենցիաներին, որոնց հետ ինքը կապված է, այլև արհեստակցական և այլ հասարակական կազմակերպություններին դումարած նույնպիսի խորհրդակցություններին:

64. Ընտրողների հասարակական ինքնագործունեություն բարձրացնելու նպատակով քաղաքային խորհրդի անդամների վրա պարտականություն է դրվում՝

ա) առաջարկելու նրանց ի քննություն այն հերթական խնդիրները, որոնք պիտի լուծվեն խորհրդի, սեկցիաների, հանձնաժողովների կողմից.

բ) բացատրելու խորհրդի որոշումները և պարզաբանելու նրանց կատարելու կարգը.

գ) ընդունելու դիմումներն ու պահանջները և հաղորդելու ըստ պատկանելության:

65. Խորհրդի անդամը պետք է տեղեկություն տա ընտրողներին իր բնակության և աշխատանքի տեղի մասին և դրանով հնարավորություն տա ամեն մի բնակչի անմիջապես դիմելու պատգամավորին՝ որևէ խնդիր, առաջարկություն կամ դանդատ անելու համար:

66. Այն ձեռնարկություններն ու հիմնարկությունները, որտեղ ծառայում են խորհրդի անդամները, խորհրդի կամ նրա նախագահության պահանջով պարտավոր են ազատել խորհրդի անդամներին այնքան ժամանակով, որքան հարկավոր է նրանց՝ իրենց պատգամավորական պարտականությունները կատարելու համար:

67. Այն հիմնարկությունը կամ ձեռնարկությունը, որտեղ աշխատում է խորհրդի անդամը, պարտավոր է վարձատրել նրան սույն կանոնագրության մեջ մատնանշված պատգամավորական պարտականությունները կատարելու դարձած դրած ժամանակի համար՝ խորհրդի տվյալ անդամի միջին աշխատավարձի չափով, յեթե այդ ժամանակը զուգադիպում է նրա աշխատանքի ժամանակին:

68. Քաղաքային խորհրդի անդամներն իրենց մանդատը ներկայացնելով ազատ մուտք ունեն հերթից դուրս առանց բացառության բոլոր քաղաքային հիմնարկությունները՝ ու ձեռնարկությունները և բոլոր պաշտոնյաների մոտ, այլև իրավունք ունեն պահանջելու իրենց հարկավոր տեղեկություններն ու բացատրությունները, բացի գաղտնիքի բնույթ ունեցող տեղեկություններից, որոնք սրվում են նախագահության թույլտվությամբ:

69. Խորհրդի անդամն իր մշտական բնակության տեղից ժամանակավորապես բացակայելու դեպքում պարտավոր է վաղորդ հաղորդել այդ մասին խորհրդի մանդատային հանձնաժողովին, որը տվյալ անդամի բացակայության ժամանակ խորհրդի կազմի մեջ և հրավիրում ցանկի մեջ յեղած ձայների մե-

ծամանության կարգով, կամ ընտրական ժողովի ընդունած ցանկի նույն այն ընտրական ժողովի առաջին փոխանդամին, վոր ընտրել է խորհրդից դուրս յեկող անդամին:

70. Քաղաքային խորհրդի անդամներին չի կարելի կալանավորել առանց կանխավ տեղեկացնելու այդ մասին քաղաքային խորհրդի նախագահությանը կամ նախագահին:

ԳԼՈՒԽ VII.

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՅԵՂԱԾ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

71. Խորհրդի անդամները հաշիվ են տալիս իրենց ընտրողներին՝ հաշվեվությունը լսելու և քննելու համար հատկապես դումարվող ժողովներում:

Այդ ժողովները դումարվում են թե՛ խորհրդի կարգադրությամբ և թե՛ ընտրողների պահանջով:

72. Ժողովի տեղի և ժամանակի մասին ընտրողներին տեղեկություն պիտի տրվի առնվազն յերկու որ առաջ:

73. Ժողովը կայացած է համարվում, յեթե ներկա յե ընտրողների վոչ պակաս քան 35 տոկոսը: Ընտրողների այդ թիվը ներկա չլինելու դեպքում յերկրորդ ժողովն որինական է համարվում, վորքան էլ լինի ժողովականների թիվը: Յերկրորդ ժողովը դումարվում է վոչ վաղ, քան առաջին չկայացած ժողովից յերկու որ հետո:

74. Ընտրողների ժողովը բաց է անում խորհրդի ներկայացուցիչը, վորին նշանակում է խորհրդի նախագահությունը:

75. Ժողովը կառավարելու համար ընտրվում է նախագահություն, վորի կազմը վորոշում է ժողովը:

76. Ընտրողների վոչ պակաս, քան 75 տոկոսի մասնակցությամբ կայացած ժողովը կարող է վորոշումն անել թե՛ իր առանձին պատգամավորներին և թե՛ նրանց բոլորին յետ կանչելու մասին: Այդ ժողովին պիտի հրավիրվեն յետ կանչվող պատգամավորները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Պատգամավորներին յետ կանչելու դեպքում նոր ընտրությունը կատարվում է խորհրդի կարգադրությամբ:

77. Խորհրդի անդամը յոթն որվա ընթացքում խորհրդի նախագահությանը համառոտ զեկուցում է ներկայացնում իր հաշվետու զեկուցման մասին:

78. Բացի այսպիսի հաշվետվության ժողովներ դումարելուց, խորհրդի անդամներն ոգտվում են իրենց ընտրողների ամեն մի ժողովից (ընդհանուր ժողովներ հիմնարկությունների ու ձեռնարկությունների, տանտիկինների շրջանային ժողովներ և այլն) խորհրդի գործունեության մասին նրանց տեղեկություն հաղորդելու, խորհրդի, նրա սեկցիաների և հանձնաժողովների կարևորագույն խնդիրները քննության առնելու համար, այլև ընտրողների ցուցմունքներն ստանալու աշխատանքի թերությունների և ցանկալի բարելավումների մասին:

ԳԼՈՒԽ VIII.

ԽՈՐՀՐԴԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

79· Մանդատային հանձնաժողովն ընտրում է խորհրդի նոր կազմի առաջին պլենար նիստը 3 անդամի և 2 փոխանդամի կազմով՝ խորհրդի ավյալ կազմի լիազորությունների ամբողջ ժամանակի համար:

80· Մանդատային հանձնաժողովի պարտականությունն է՝

ա) խորհրդի բոլոր անդամների և փոխանդամների անձնական և վիճակագրական ճիշտ հաշվառությունն ըստ ընտրակոն ժողովների, այլ և սեկցիաների և հանձնաժողովների այն անդամների հաշվառությունը, որոնք խորհրդի անդամ չեն·

բ) խորհրդի պատգամավորների ընտրության կանոնավորության ստուգումն ընտրական հանձնաժողովի հետ միասին և ընտրությունների հաստատության մասին խորհրդի պլենար նիստին ընդհանուր զեկուցում ներկայացնելը:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահ՝
Ա· ԿԱՐԻՆՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝
Հ· ՏԱՏՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ·

Հրատ· «Խորհ· Հայաստ·», 1926 թ·, համարներ 6 և 7·

Հ. Ս. Ս. Հանրապետության Գրադարան

Տպ· Տրեստի 1-ին Տպ· Գրատ· 318· բ· Պատ· 1899· Տիրաժ 1000·



ՀՀ Ազգային գրադարան
NL0943187

- 50 -
1926
Ч92
862